կողմից ավելի և ավելի հարկադրական պահանջ, որին ընդդիմադրում էին համեմատաբար խոշոր հողաբաժինների տերերը։ Այդ պայքարը մինչև սովետական կարգերի հաստատումը տարեցտարի ստանում էր ավելի և ավելի սուր բնույթ։ Պարբերական հողաբաժանությունը ավելի արագ իրացվեց այն գյուղերում և հատկապես Սիսիանում, որտեղ բնակչությունը նորամուտ էր, միայն Թուրքմենչայի դաշնագրությունից հետո էր Պարսկաստանի զանազան գյուղերից վերաբնակվել և նոր հայրենիքում նոր էր ստացել գյուղական հողամաս, որը նա նոր էր բաժանել իր անդամների մեջ։

Կրկնվող հողաբաժանումը մասնավորապես կիրառվում էր Սիսիանի Ուզ գյուղում, որտեղ բոլոր վարելահողերը և խոտհարքը ամբողջապես միացվում էին և ենթարկվում վերաբաշխման։

Իսկ հին տեղական բնակչություն ունեցող գյուղերում երկար ժամանակ գործադրվել է մի այլ սիստեմ, որով հողերը մնացել են նախկին տնատերերի ձեռքին և միայն ավելցուկները կտրվել են պակասավոր տնատերերին բավարարելու համար։ Հողի բաշխման միջոցին հիմք են ընդունել միայն տղամարդկանց, այն է՝ ընտանիքի ամեն մի ամուսնացած տղամարդը ճանաչվել է որպես առանձին մեկ կլլոխ՝ թեկուզ լիներ 12 տարեկանից փոքր, իսկ աշխատունակ, բայց չամուսնացած տղամարդը, թեկուզ լիներ վարժ մաճկալ, համարվել է կէսկլլոխ։ Հոտաղ լինել կարողացող պատանին՝ մի քառորդ գլուխ է ճանաչվել։ Մնացած արու զավակները, ինչպես և կանայք, հաշվի չեն առնվել[26]։ Զանգեզուրի հայերի հողօգտագործման սիստեմի մեջ խիստ բնորոշ է այն հանգամանքը, որ ընտանիքի միայն արական սեռի ներկայացուցիչներն են հաշվի առնվել, որտեղ թե՛ հողերի և թե՛ ամբողջ շարժական և անշարժ գույքի ժառանգներն են համարվել միայն ու միայն արու զավակները և ոչ թե նաև կանայք[27]։ Այս տեսակետով Զանգեզուրը տարբերվել է Երևանյան դաշտի հայ բնակչությունից, որտեղ հողաբաժանության համար հիմք է ծառայել ամպա կոչվող տնտեսական միավորումը, որի մեջ մտել են 16 հոգի՝ թե՛ տղամարդ և թե՛ կին։

Հողաբաժանության միջոցին գյուղը բաժանվել է տասնակների։ Նախ պարզվել է, թե որքան հող, վարելահող և խոտհարք ունի յուրաքանչյուր տընտեսությունը և որքան գլուխ։ Այդպիսով պարզվել է համայնքի ունեցած վարելահողերի և խոտհարքի ամբողջ տարածությունը, նույնպես կլլոխների քանակությունը։ Մեկ թիվը մյուսով բաժանելով ստացվել է նորմա, այսինքն՝ այն, թե յուրաքանչյուր գլխին ինչքան վարելահող և խոտհարք պետք է հասնի, ապա կազմվել են տասնակները, այնպես, որ յուրաքանչյուրի մեջ գլուխների թիվը լիներ հավասար։ Ամեն մի տասնակի ներկայացուցիչ ընտրվել է մեկը, որը կոչվել է դաղբաշի[28]։ Բոլոր հողերը բաժանվել են քվեով տասնակների մեջ, իսկ ամեն տասնակի մեջ բաշխումը կատարել է դաղբաշին ինքը։ Եթե որևէ տնտեսություն ունենում էր իրեն հասանելիքից ավելի տարածություն, ավելին տրվում էր պակաս ունեցող տնտեսությանը։

---

[26] Зелинский С. П., նշված աշխ., էջ 51, 52։

Գորիսում ամեն 20—21 տարեկան չափահասության հասած տղամարդը կլլոխ էր։ Հայրն ընտանիքից նրա բաժանվելու միջոցին չէր կարող զրկել նրան իր բաժին հողից, մինչդեռ այլ գույքից, շարժական թե անշարժ, նաև այդուց կարող էր բաժին չհանել։

[27] Շատ կարևոր է այս տեսակետով հետազոտել բոլոր հայաբնակ գավառները։ Դա կլինի շատ կարևոր աղբյուր և նախորդ, մանավանդ միջին դարերի, ժողովրդական իրավունքի մի քանի առեղծվածները լուծելու համար։